Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Պ-230-29.03.2013,14.05.2013-ԱՄ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով.

«12) բեղմնականխում՝ անցանկալի հղիության կանխում տարբեր միջոցների և (կամ) մեթոդների կիրառմամբ.

13) անպտղություն՝ զույգի մեկ տարի կանոնավոր սեռական կյանքով ապրելու և բեղմնականխման միջոցներ և (կամ) մեթոդներ չօգտագործելու դեպքում կնոջ հղիության բացակայություն, բացառությամբ կրծքով կերակրման կամ դաշտանադադարով պայմանավորված դեպքերի.

14) հարազատ՝ արյունակցական 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի կապ ունեցող անձ:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 4-րդ կետի «մեթոդների» բառը փոխարինել «միջոցների և մեթոդների» բառերով.

2) 8-րդ կետի «մեթոդները» բառը փոխարինել «միջոցները և (կամ) մեթոդները» բառերով:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) վերնագրի «բեղմնականխման միջոցների» բառերը փոխարինել «բեղմնականխման միջոցների և (կամ) մեթոդների» բառերով.

2) 1-ին մասի «բեղմնականխման արդյունավետ միջոցներից» բառերը փոխարինել «բեղմնականխման արդյունավետ միջոցներից և (կամ) մեթոդներից» բառերով.
3) 2-րդ մասի «բեղմնականխման առկա միջոցների» բառերը փոխարինել «բեղմնականխման առկա միջոցների և մեթոդների» բառերով.

4) 3-րդ մասի «պտղաբերության կարգավորման միջոցների» բառերը փոխարինել «պտղաբերության կարգավորման միջոցների և (կամ) մեթոդների» բառերով.

5) 4-րդ մասի «բեղմնականխման միջոցները» բառերը փոխարինել «բեղմնականխման միջոցները և մեթոդները» բառերով:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասում «միջոցների ընտրության» բառերը փոխարինել «միջոցների և մեթոդների» բառերով:

Հոդված 5. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «18-35 տարեկան» բառերը փոխարինել «նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած 20-35 տարեկան» բառերով.

2) 2-րդ մասի «18 տարեկանից սկսած» բառերը փոխարինել «նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած 20 տարեկանից սկսած» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: